ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

N 352 - Ա

ԱՆԻ ԲԱԲԱՅԱՆԻ ԵՎ ԹԱԴԵ ՀԱՂՎԵՐԴՅԱՆԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻՆ ՄԱՄՆԱԿՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հանրային ծառայության մասին» օրենքի 9-րդ հոդվածի 23-րդ մասով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 39-րդ հոդվածով՝

1. Թույլատրել փոխվարչապետ Մհեր Գրիգորյանի խորհրդական Անի Բաբայանին 2026 թվականի հունիսի 17-19-ը ներառյալ մասնակցելու Հանրային կառավարման տարածաշրջանային դպրոցի (ReSPA) կողմից Մոնտենեգրոյում անցկացվող «Արդյունավետ քաղաքականության հաղորդակցություն կառավարություն-ների համար», իսկ ռեֆերենտ Թադե Հաղվերդյանին 2026 թվականի հունիսի 15-18-ը ներառյալ՝ «ReSPA-ի թեմատիկ խմբի հանդիպում քաղաքականության կառավարման, ավելի լավ կարգավորման և պարզեցման վերաբերյալ» խորագրերով վերապատ-րաստման դասընթացներին:

2. Ընդունել ի գիտություն, որ վերապատրաստման դասընթացներին մասնակցության հետ կապված բոլոր ծախսերն իրականացվելու են հրավիրող կողմի միջոցների հաշվին:

3. Փոխվարչապետ Մհեր Գրիգորյանի խորհրդականին և ռեֆերենտին՝ աշխատանքի ներկայանալուց հետո տասնօրյա ժամկետում Վարչապետի աշխատակազմ ներկայացնել ուսումնասիրված նյութի և հետագա աշխատանքային գործունեության ընթացքում դրա կիրառելիության վերաբերյալ հաշվետվություն:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Մ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

Երևան

12.06.2026
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ